Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Սարամեջի Մ. Ֆարմանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթներ՝ մաթեմատիկայի (18 դասաժամ), զինղեկի (1 դրույքաչափ), տղաների տեխնոլոգիայի (1 դասաժամ), աղջիկների տեխնոլոգիայի (3 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ), երաժշտության (2 դասաժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը, և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

. Անձը հաստատող փաստաթուղթ,

. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

. Ինքնակենսագրություն (Ձև 5),

. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Զինղեկի մրցույթին մասնակցողը պարտադիր պետք է ունենա պահեստազորի սպայի կոչում:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթները տեղի կունենան **սեպտեմբերի 18 -ին՝ ժամը 12-ին**, ՀՀ Լոռու մարզի Սարամեջի միջնակարգ դպրոցում. Հասցեն՝ Լոռու մարզ, գ. Սարամեջ, 1 փող., 2-րդ նրբ., շենք 10:

Տեղեկությունների համար զանգահարել (093)81-59-47 հեռախոսահամարով: